*Ծաղկին ազգի ազգի, տան ծափըս ծափի.*
*Եւ գհոտն անուշ բուրեն ի քիմս ամենի։*

*Գայ բըլպուլն իջանէ ի մէջ բաղչենին,*
*Խընդրէր եւ որոնէր ըզխուր սիրելին.*
*Եւտես որ էր ի քուն ի մէջ կոկոնին,*
*Սիրով քաղցըր խաւսէր զբանս ողորմագին։*

*Դու վարդ ես անթառամ ի դրախտն Ադենի*
*Մեծ թագաւոր եւ տէր ծաղկանցն ամենի.*
*Ի քո գունէտ ծաղկունքն ամէն զարդարի,*
*Եւ պայծառ գեղեցիկ փայլեն ի յերկրի։*

*Ես կու այրիմ ի քէն երբ լինիմ հեռի,*
*Եւ զաւրն ի բուն շըջիմ ողորմ ու լալի,*
*Ջար եւ փիղան կանչեմ թռչնոցն ամենի,*
*Որ թէ շաքար տան ինձ, նայ սապր ու լեղի։*

*Զարթիր, ով սիրելի, ի յառաւաւտին*
*Որ ես դու սարսափելի ահեղ տեսողին.*
*Շարժէ քաղցրիկ հողմով ըզթերթըս քոյին,*
*Եւ զիս արժանացո տեսութեան նորին։*

*Էկեալ զումրին ասէ թռչնոց բըլբուլին,*
*Սիրով արեկ մոնունք մէջ կանաչ բաղչին.*

---

10. H. *ծաղիկք*: — 11. H. *ամէնի*: — 12. H. *գայր բլբուլն իջանէր ի մէջ բաղչէնին*. — 13. A. *ըզուր*: — 14. H. *եւտես որ ի ներքոյ էին կոկոնին*: — 15. H. *քաղցրախօսէր*: *ողոգին*:

17. H. *ծաղկանց ամէնի*: — 18. H. *գունէդ*: *զարդարին*: — 13. H. *փայլին*:

20. H. *յերբ*: — 22. H. *ջան ու… ամէնի*: — 23. H. *նա*:

25. H. *ո՞ւր ես*: — 26. H. *ըզթերթդ*: — 27. H. չունի *զիս*: A. *արժանացոյ*:

28. A. ասկէ սկսեալ մինչեւ տող 68 չունի, երկու թուղթ ինկած ըլլալով (Թղ. 50բի և 51աի մէջ-տեղ)։ Թերայթը լրացուցած ենք Տեվկանցի օրինակէն։ — H. *եկեալ*: